<u>Վերջնական օգտագործողի հավաստագիր</u>՝ հսկվող ապրանքներ և (կամ) հսկվող ոչ նյութական արժեքներ ստացող պետության կամ այդ պետության անձի (իրավաբանական կամ ֆիզիկական) անվանման, դրա գտնվելու և գործունեության վայրի մասին, արտահանվող հսկվող ապրանքների կամ փոխանցվող հսկվող ոչ նյութական արժեքների նկարագրի մասին, այդ ապրանքների, տեղեկատվության կամ մտավոր գործունեության արդյունքների վերջնական օգտագործման նպատակի մասին տեղեկություններ պարունակող փաստաթուղթ, որը նաև հավաստում է, որ նշված ապրանքները և (կամ) տեղեկատվությունը չեն փոխանցվի որևէ երրորդ երկիր կամ անձի կամ չեն օգտագործվի հայտարարագրված նպատակից բացի որևէ այլ նպատակով՝ առանց արտահանող երկրի պետական կառավարման մարմնի գրավոր և պատշաճ կերպով վավերացված համաձայնության: Վերջնական օգտագործողի հավաստագիրը ներմուծող երկրի օրենսդրությամբ սահմանված լինելու դեպքում հաստատում է վերջնական օգտագործողի երկրի իրավասու պետական կառավարման մարմինը: